

807

ՀԻՍՅ ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ

Լեզվագրական Ճակույտեթի I կուրսի համար



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1938

Հաստատված է ՆՍՀՄ ԺԿՆ-ին կից  
Բարձրագույն դպրոցների համամիու-  
թենական կոմիտեյի կողմից

## Ծ Ր Ա Գ Ի Ր

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ

Լեզվագրական ֆակուլտետի 1-ին կուրսի համար

#### 1. Գրականության տեսության սուբյեկտի խնդիրները

Գրականագիտությունը և նրա կազմը՝ գրականության պատմությունը, քննադատությունը, գրականության տեսությունը, գրականագիտական առարկաների պատմագրությունը: Գրականության պատմության, քննադատության և գրականության տեսության փոխադարձ կապը: Ոժանդակ և հարեվան զիսցիպլինների նշանակությունը:

Գրականության տեսության տեղը գրականագիտության մեջ: Գրականության տեսության կուսակցականությունը: Մարքսլենինյան գրականության-տեսության հիմնական խնդիրները:

#### 2. Մարքս-լենինյան ուսմունքը գրականության՝ վորպես աշխարհի գեղարվեստական յուրացման՝ մասին

Մարքսն աշխարհի «գեղարվեստական յուրացման» մասին: Գրականությունը վորպես իդեոլոգիայի ձեվ և նրա տարբերությունը մյուս իդեոլոգիական ձեվերից: Լենինյան արտացոլման տեսության կիրառումը գեղարվեստական գրականության բնագավառում:

Գրականության սպեցիֆիկումը: Բովանդակության և ձեվի պրոբլեմը գրականության մեջ: Գրականության պատկերայնությունը:

Թարգմ. Ս. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ  
Թարգմ. խմբ. դոցենտ Լ. ՎԱՐԴՈՒՆԻ  
Տեխ. խմբ. ե. ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դրավիտի լիազոր Ց. 3710, Պատվեր 310, Տիրաժ 2300

Հանձնված է արտագրության 2 նոյեմբերի 1938 թ.

Ստորագրված է ապելու 17 նոյեմբերի 1938 թ.

### 3. Պատկերը վորպես կյանքի արտացոլման ձև

Իրականությունը արտացոլումը մարդկային կյանքի կոնկրետ պատկերների մեջ (արտաքին և ներքին): Գեղարվեստի պատկերաչափության հիմքը: Պատկերաչափության բնութագրական հատկանիշները՝ տիպականացում, անհատականացում, համադրություն կյանքի յերեվույթների նկարագրություն մեջ, հնարանքի՝ (ВЫМЫСЕЛ) վորպես գեղարվեստական ընդհանրացման յուրահատուկ ձևվի՝ առկայությունը, ուշագրություն կենտրոնացումը ղեպի մարդկային պրակտիկան:

Մ. Գորկին գրականության յուրահատկություն մասին: Պատկերի պատմականությունը: Նրա ձևերի բազմազանությունը, պայմանավորված մարդկային պրակտիկայի պատմական բազմազանությամբ: Որչեկտիվ և սուբյեկտիվ ելմանը պատկերի մեջ՝ իրականության արտացոլումը հեղինակի ըմբռնողությամբ: Պատկերների հիմնական տեսակները՝ ռեալիստական և ռոմանտիքական: Պատկերի հիմնական ժանրային ձևավորությունները՝ եպիքական, լիրիկա-եպիքական, լիրիկական: Պատկերի եսթետիկական ֆունկցիան՝ ղեղեցիկի մասին հասարակական պատկերացումների կոնկրետացումը մարդկային կյանքի կենդանի պատկերների մեջ: Պատկերի դաստիարակչական դերը, ընկ. Ստալինը հեղինակներին՝ «հոգու ճարտարապետներին» մասին: Պատկերի ճանաչողական ելույթունը՝ կենսական պրոցեսի արտացոլումը նրա տիպիքական և կոնկրետ զրահվորումների մեջ:

### 4. Ժողովրդայնությունը յեվ կուսակցականության պրոբլեմը

Ժողովրդայնությունը գրականության մեջ՝ վորպես իրականության ճշմարիտ արտացոլումը, ժողովրդական շահերին համապատասխանող և այդ մասսաների ազատագրման ու աճման նպաստող: Կլասիկների ստեղծագործությունների ժողովրդայնությունը: Կուսակցականության պրոբլեմը գրականության մեջ: Բոլշևիկյան կուսակցականությունը վորպես ժողովրդայնության բարձր ձև: «Սոցիալիստական



11-256009

գրականության կուսակցականության սկզբունքը, զարգացնի այդ սկզբունքը և անցկացնի այն կյանքի մեջ կարելույն չափ լիովին ու ամբողջական ձևով» (Լենին): Գեղարվեստորեն մշակված կուսակցականությունը և մերկ տենդենցիոզությունը: Գեղարվեստական ստեղծագործությունների ճանաչողական-դաստիարակչական դերը: Գրականության եսթետիկական արժեքը: Գեղարվեստականության չափանիշը՝ կենսական ճշմարտությունը, ընդհանրացման խորությունը և նկարագրման կոնկրետությունը: Իրական խոշոր ստեղծագործությունների և պատկերների պատմական կենսունակությունը, պայմանավորված նրանց ճշմարտության չափով և պատկերացման ուժով:

Մարքսը, Ենգելսը, Լենինը և Ստալինը գրողների և գրականության մասին: Գրական ստեղծագործությունների ուսումնասիրման և գնահատման չափանիշը մարքսիզմի-լենինիզմի կլասիկներին մոտ:

### 5. Գրական ստեղծագործությունը վորպես ամբողջություն

Գաղափար գեղարվեստական ստեղծագործության կառուցվածքի մասին: Բովանդակության և ձևի միասնությունը գրականության մեջ: Գաղափարա-թեմատիկական մատերիալի փոխանցումը խարակտերների: Կոմպոզիցիան, սյուժեաը, լեզուն, վոտանավորը, վորպես պատկերային ձևի ստեղծման միջոցներ: Նրանց հիմնավորումը գրվածքի պատկերներով: Իրական ստեղծագործությունը, վորպես գրական պրոցեսի միավոր: Նրա գաղափարական ուղղվածությունը, նրա բոլոր տարրերի փոխադարձ կապը: Իրական ստեղծագործության վերլուծության մեթոդիկան:

### 6. Գեղարվեստական ստեղծագործության թեման յեվ գաղափարը

Թեման՝ կենսական նյութ, զրված գրվածքի հիմքում: Թեմայի և գաղափարի միասնությունը, գեղարվեստական գրվածքի իդեան: Գեղարվեստական յերկի պրոբլեմը՝ զրված կենսական

վորոշ նյութի վրա: Մտանդացու մը և գաղափարը: Գրվածքի գաղափարը և գաղափարական բովանդակութունը: Սոցոր գրական ստեղծագործութունների գաղափարական բովանդակության բազմակողմանիութունը և բարդութունը: Գեղարվեստական յերկի գաղափարի կոնկրետ-պատմական ընդլայնումը: Սորհրդային գրականութեան լայն թեմատիկական հնարավորութունները և բարձր գաղափարականութունը:

## 7. Կ ո մ պ ո գ ի ց ի ա ն

Գրական յերկի կոմպոզիցիան՝ գրվածքի կառուցվածք, նրա բոլոր առանձին մասերը միացնող մի որդանական միասնութեան մեջ: Իրականութեան յերևույթների փոխհարաբերակցութունների արտացոլումը կոմպոզիցիայի մեջ՝ ըստ հեղինակի ըմբռնման:

Կոմպոզիցիան, վորպես գեղարվեստական յերկի ելմենտների կազմավորման ընդհանուր ձևով: Սյուժետը վորպես եպիքական, լիրիկա-եպիքական և դրամատիքական յերկերի կազմավորման մասնակի ձևով: Սյուժետը վորպես կյանքի տիպիքական հանգամանքներն արտացոլող դեպքերի սխտեմ: Սյուժետը վորպես խարակտերներ պատկերելու միջոց: Սյուժետի պատմականութունը: Սյուժետի ֆորմալիստական մեկնաբանութունը, վորպես յերկի դեպքերի տրամաբանական սխեմա: Սյուժետի Գորկու տված ընտրողման մեթոդոլոգիական նշանակութունը՝ «մարդկանց փոխադարձ կապի, հակասութեան, համակրանքի, հակակրանքի և առհասարակ փոխադարձ հարաբերութունների, այս կամ այն խարակտերի աճման և կազմավորման» (Գորկի) — սյուժետը: Սյուժետի տարրերը՝ եքսպոզիցիա, քակտումն, գործողութեան զարգացումը, կուլմինացիա, հանդույց, եպիլոգ: Լիրիքական շեղումներ: Ներածական եպիլոգներ: Գեղարվեստական զարգացումը: Ֆարբուլան և նրա հարաբերութունը սյուժետին, Ֆարբուլայի զանազան ընտրողմանները գոյութուն ունեցող գրականութեան մեջ:

## 8. Գեղարվեստական գրականութեան լեզուն

Մարքսը լեզվի՝ վորպես «մարդու իրական գիտակցութեան» մասին: Լեները լեզվի՝ վորպես մարդկային հաղորդակցման խոշորագույն միջոցի՝ մասին: Գեղարվեստական գրականութեան լեզվի տիպա-

կանացնող նշանակութունը: Լեզվի վոճայնութունը՝ կյանքի զանազան բնագավառների զանազան լեզվական վոճերի արտացոլումը գրական լեզվի մեջ:

Գեղարվեստական գրականութեան լեզվի անհատական ընդլայնումը՝ կենդանի խոսքի ձևերի ու հատկութունների պահպանումը նրա մեջ:

Լեզվի շերտավորումը, նրա կապը կոնկրետ խարակտերների հետ: Հեղինակի լեզվի դերը հասարակութեան լեզվական կուլտուրայի զարգացման մեջ: Պերսոնաժների լեզուն և հեղինակի լեզուն: Բանաստեղծական լեքսիկան: Լեքսիկական հնարավորութունները՝ ժամանակակից գրական լեզուն, հնարանութուններ, նորաբանութուններ, ոտարաբանութուններ, բարբառաբանութուններ: Նկարագրական միջոցները՝ եպիտիտ, համեմատութուն, փոխաբերութուններ (զանազանացում, լիտուտա, մետաֆորա, մետոնիմիա, սենակոլոս): Բանաստեղծական շարահյուսութունը և նրա հարաբերութունն արձակին: Կետադրութեան նշանակութունը գեղարվեստական յերկում: Լեզվական ձևերի բովանդակալից իմաստը գրականութեան մեջ:

## 9. Տաղաչափութուն

Չափածո և արձակ: Բանաստեղծութեան հուղական հաղեցվածութունը: Ռիթմ: Ռիթմը նախնական պոեզիայում: Ռիթմը և աշխատանքը: Ռիթմի իդեոլոգիական նշանակութունը: Ինտոնացիան՝ ռիթմի բովանդակալից հիմք: Վոտանավորի տողը: Վոտք: Դադար: Տեղադարձ: Տողադարձ: Վոտանավորի սխտեմը: Գանակական և վորակական տաղաչափութուն: Անտիկ պատմական տաղաչափութունը: Անտիկ տաղաչափութեան տիրմինոլոգիայի յուրացումը նորագույն տաղաչափութեան մեջ: Այդ տերմինոլոգիայի փոփոխութունը: Վոտանավորի սխտեմը ռուսական պոեզիայի պատմութեան մեջ: Ժողովրդական բանաստեղծութուն: Վանկային, վանկա-շեշտավոր, շեշտավոր վոտանավոր: Ռուսական վանկա-շեշտավոր բանաստեղծութեան հիմնական չափերը՝ յամբ, քորի, դակտիլ, ամֆիբրաքոս, անապեստ: Հանդ: Հանգի տեսակները՝ արական, իգական, դակտիլային, գերդակտիլային: Հանգի կոմպոզիցիան նշանակութունը: Հանգավորման

յեղանակները՝ միջանկյալ, խաչաձևող, պարփակող և այլն: Տուն: Աղաթ բանաստեղծութուն: Անհանգ բանաստեղծութուն:

Չափազրուծութուն: Հնչյունի նշանակութունը բանաստեղծական լեզվի մեջ: Նմանաձայնութուն: Արտահայտութեան ուժեղացումը, վորպես բանաստեղծական լեզվի հնչյունային կաղձավորման հիմնական իմաստ: Ալիտերացիա և ասոնանս: Հնչյունական անաֆորա, եպիֆորա, կցորդ, ող և այլն: Բանաստեղծութեան հնչյունական կաղձավորման ռիթմա-ինտոնացիոն նշանակութունը:

## 10. Մեթոդ, վոն, գրական հոսանք

Գեղարվեստական մեթոդը աշխարհի «գեղարվեստական յուրացման» սկզբունք, վորը պայմանավորում է տվյալ ստեղծագործութեան կամ հոսանքի մեջ իրականութեան յերևույթների պատկերավոր ընդհանրացման ընույթը: Ռեալիզմը և ուսմանտիզմը, վորպես հիմնական մեթոդներ նախասոցիալիստական գրականութեան մեջ, վորպես իրականութեան գեղարվեստական արտացոլման և այդ իրականութեան գնահատման տարբեր տիպեր: Իր տիպիքական յուրահատկութուններով՝ իրականութեան արտացոլումը սոցիալիստական գրականութեան մեջ, վոչ թե իրականի, այլ կամեցածի պատկերումը ուսմանտիքական գրականութեան մեջ: Հաստատվող կյանքի առանձին կողմերի իդեալականացումը ուսմանտիքի մեջ: Առաջադիմական և հետադիմական ուսմանտիքի: Հեղինակի մեթոդի կախվածութունը նրա աշխարհայացքից: Նրանց միասնութունը: Հակասութեան հնարավորութունը աշխարհայացքի և մեթոդի միջև (Բալզակ, Գոգոլ և այլն): Հիշված մեթոդների տարբեր զրահորումները տարբեր ժամանակների, ժողովուրդների ու դասակարգերի գրականութեան մեջ:

Քննադատական սեռիզմը՝ անմարդկայնութեան և խաբեյութեան, շահագործողական հասարակական հարաբերութեանների պայմաններում մարդու ճնշման տարբեր զրահորումների—ճշմարիտ պատկերումը անցյալի խոշոր գրողների կողմից (Պուշկին, Լ. Տոլստոյ, Շչեքրին, Բալզակ և այլն): Առաջադիմական ուսմանտիքը՝ խոշոր հեղինակների պատկերացումը ապագա

բանական, աղաթ և ստեղծագործական կյանքի պատկերների մասին և կովի կոչ այդ կյանքի համար (յերիտասարդ Պուշկինը, Լեբմոնտովը և այլն):

Սոցիալիստական սեռիզմը, վորպես բանաստեղծական արվեստի զարգացման բարձր աստիճան:

Սոցիալիստական սեռիզմի հիմնական գծերը՝ իրականութեան արտացոլումը նրա առաջատար տենդենցների մեջ, նրա զարգացման մեջ, սոցիալիստական և ուսմանտիքական տենդենցների միասնութունը, խարակտերներին հերոսականութունը, սոցիալիստական նպատակայնութունը: Ժողովրդայնութեան պրոբլեմը քննադատական սեռիստական, հեղափոխական-ուսմանտիքական և սոցիալիստական սեռիստական գրականութեան մեջ:

Հեղինակի վոճը, վորպես նրա ստեղծագործութեան առանձնահատկութունների միասնութուն՝ զրահորող նրա բոլոր յերկերում: Հեղինակի վոճի ուսումնասիրութեան անհրաժեշտութունը—նրա զարգացման և հակաութեանների մեջ:

Իրական հոսանքը (ուզղութունը, դպրոցը, խմբավորումը), վորպես գաղափարական ուզղվածութեամբ ու ստեղծագործական սկզբունքներով իրար մոտ՝ մի շարք հեղինակների ստեղծագործութունների գաղափարական գեղարվեստական առանձնահատկութունների միասնութուն: Մեթոդի, գրական հոսանքի և վոճի ըմբռնումների փոխհարաբերակցութունը:

## 11. Բանաստեղծական սեռերը յեվ սեռակները

Բանաստեղծական սեռերը՝ վիպերգութուն, քնարերգութուն, թատերգութուն: Իրականութեան արտացոլման տարբեր ձևերը վիպերգութեան և քնարերգութեան մեջ: Տիպիքական պատկերները վիպերգութեան և տիպիքական վերապրումները քնարերգութեան մեջ: Լիրիզմի հնարավորութուն վիպերգութեան և եպիքականութեան հնարավորութունը քնարերգութեան մեջ: Իրամայի սինտակսիկ ընույթը: Լիրիքական և լիրիկա-եպիքական տարբերի միասնութունը լիրիկա-եպիքական ժանրերում:

Բանաստեղծական սեռերը և նրանց մասնակի տեսակները: Փանրերի անկայունութունը, նրանց փոփոխութեանները և փո-

խաղարձ կապը գրականության պատմության մեջ: ժանրերի առաջացումը պատմական վերջ պայմաններում և նրանց ձևափոխությունները տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր հեղինակների մոտ: Եպիքական ժանրեր՝ պոեմա, վեպ, վիպակ, պատմվածք, ոչերկ, հովվերգություն, առակ: Իրամասերական ժանրեր՝ վոդերբուլժյուն, կատակերգություն, զրամա: Լիրիքական ժանրեր՝ լիրիքական բանաստեղծություն, ներբող, յեղերերգություն, եպիգրամ և այլն:

### Գ Ր Ա Ն Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն


#### I

1. Լենին—ա) Հոգեվածներ Տոլստոյի մասին.  
բ) «Գերցենի հիշատակին», XIV հատ.  
գ) «Կուսակցական կազմակերպություն և կուսակցական գրականություն»:
2. Լունաչարսկի—«Լենինը և գրականագիտությունը»:
3. «Մարքսը և Ենդելը արվեստի մասին»:
4. Պլեխանով—հոդվածները գրականության և արվեստի մասին, V, VI, X, XIV հատորներ:
5. Белинский—«Взгляд на русскую литературу», 1846 и 1847 г. г.  
«О разделении поэзии на роды и виды».

#### II

1. И. А. Виноградов—«Вопрос Марксистской поэтики», Л. 1935 г.
2. Л. И. Тимофеев—«Основы теории литературы», М. 1938 г.
3. Л. В. Томашевский—«Теория литературы», 5-ое издание, Л. 1930 г.
4. Потенбня—«Из записок по теории словесности».
5. Жирмунский—«Введение в метрику».

6. Жирмунский—«Рифма, ее история и теория».
7. Штокман—«Библиография работ по стихосложению».
8. Тимофеев—«Теория стиха».
9. Мышковская—«Работа Л. Толстого над произведением».
10. Нусинов—«Вековые образы».
11. Розенталь—«Против вульгарного социализма».
12. Гудзий—«Как работал Л. Толстой».



14 ДЕК 1938

508

//

28600

ПРОГРАММА

По истории литературы

---

Изд. Педагогический Института Ереван 1938